ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ Է ՍԱՀՄԱՆՎԵԼ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՑ ՄԵՐՁԱՎՈՐ ԱԶԳԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

17.02.2021 16:09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը 03.02.2021թ. նիստում թիվ 2/9-Լ որոշմամբ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում կատարել է լրացում համաձայն որի՝ 2020 թվականին Արցախյան պատերազմում զինվորական ծառայության կամ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով զոհված (մահացած), անհետ կորած կամ գերեվարված զինծառայողի (կամավորի) ծնող, ամուսին կամ զավակ ունեցող փաստաբանների համար սահմանվել են անդամավճարի հետևյալ արտոնությունները՝

- **<u>մեկ տարի ժամկետով ամենամսյա անդամավճարից լրիվ մասով ազատում</u>** և

- **<u>անդամավճարի պարտքի զիջում (ներում)՝ 2021 թվականի փետրվարի 03-ի դրությամբ</u>**

Հիշեցնենք նաև, որ 2020թ. հոկտեմբերին Պալատի խորհուրդն անդամավճարի արտոնություններ էր (անդամավճարի ընթացիկ վճարումից լրիվ մասով ազատում և պարտքի զիջում) սահմանել նաև ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով մասնակցած զորահավաքի և ռազմական գործողություններին մասնակցող փաստաբանների, ինչպես նաև ռազմական դրության պայմաններում անմիջականորեն ռազմական գործողությունների իրականացման վայրում մշտապես բնակվող (հաշվառված) փաստաբանների համար:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 03.02.2021թ. թիվ 2/9-Լ որոշումը

Բեռնել «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգը

*** *Կարգի վերջին ինկորպորացիան՝ 03.02.2021թ. դրությամբ***

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի

աշխատակազմ

Առաջարկվող նորություններ

02.04.2016ԿԻՆ

21.02.2018ՀԱՅԱՍՏԱՆԻ

06.10.2020ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱՋԱՏՎԵԼՈՒ ՆՈՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՆՎԱՋԵՑՎԵԼ Է

ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })